ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8
0054, Ереван, Давидашен 4, ул. А. Микояна 109/8
109/8, A. Mikoyan str., Davidashen 4, Yerevan 0054
Հեռ./Тел./Tel. (+374 10) 31 77 17
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 36 34 49
Էլ. փոստ / E-mail: mes@mes.am

N 7111.1.1/ 2736-16

03 . 03 2016 թ.

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական
կազմակերպության նախագահ Լ. Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 23.02.16թ.
թիվ 268-ի 8 գրության

Հարգելի տիկին Դոյդոյան

Հայտնում եմ, որ ՀՀ ՏԿԱԻ նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է <<Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկատվությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի /պատճենի/ տրամադրման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 15.10.15թ. 1204-Ն որոշմամբ սահմանված պարտավորությունների շրջանակներում:

Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքը հնարավորություն է ընձեռում դիմողներին հարցումներ ուղարկել առցանց՝ http://mtaes.am/hy/write-a-letter/ և հետևել ընթացքին:

Նախարարության պաշտոնական կայքում առկա է նաև <<Հաճախակի տրվող հարցեր>> բաժինը՝ http://mtaes.am/hy/harcer/ :

Ինչ վերաբերում է էլեկտրոնային հարցումներին, ապա հայտնում եմ, որ 2016թ-ի հունվարի 1-ից մինչև փետրվարի 23-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՏԿԱԻ նախարարության աշխատակազմում մուտքագրվել են թվով 71 էլեկտրոնային հարցումներ, որոնց, սահմանված կարգով, ընթացք է տրվել և գրավոր պատասխանվել:

Հարգանքով՝

Հ.Հակոբյան

Կատարող՝ Քարտուղարություն
Ս. Ասիլյան Հեռ. 010-31-78-43